## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների մատուցման գնման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի փետրվարի 13-ին կնքված N ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 պայմանագրում 2019 թվականի մարտի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագիրը կնքվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**Փոփոխության նկարագրություն՝** Կողմերը համաձայնագրով հաստատեցին խմբագրված գնման ժամանակացույցը/ հավելված 1/:

**Փոփոխության հիմնավորում՝** "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս:

Պատվիրատու՝ Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

*13.02.2019թ.* ԿՆՔՎԱԾ N ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ (ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ) ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ. Շատին

12. մարտ 2019թ.

Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, ի դեմս գործադիր տնօրեն՝ Բ. Մարգարյանի, որը գործում է դպրոցի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկ Մարտիրոսյան Վարազդատի»Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Մարտիրոսյանի, որը գործում է Ա/Ձ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 13.02.2019թ. կնքված N ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով, հիմք ընդունելով Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նիստի թիվ 06 արձանագրության քաղվածքը, կողմերը որոշեցին

1.1 ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետում /13.02.2019թ. կնքված պայմանագրի համաձայն/ "1489600 / մեկ մլն. չորս հարյուր ութսունինը հազար վեց հարյուր/"նշված թվերը և բառերը փոխարինել "1245500 / մեկ մլն. Երկու հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր/" թվերով և բառերով:

1.2 ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 ծածկագրով գնման պայմանագրի Հավելված 1 /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը/ շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ 13.02.2019թ. կնքված ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 պայմանագրի կետերը մնում է անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով ստանձնած իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 2 /երկու/ էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Գ. Շատին<br>Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ<br>ՀՎՀՀ 08903519<br>Բանկ՝ ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16016106669300<br>Տնօրեն Բ. Մարգարյան | ՎՁ Վարդահովիտ 8փ 26 բն. 8<br>«Հայկ Մարտիրոսյան Վարազդատի»Ա/Ձ<br>ՀՎՀՀ 86685948<br>Բանկ՝ ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16016023279100<br>Տնօրեն՝ Հ. Մարտիրոսյան |
| ------------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ------------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 2
«13» փետրվար 2019 թ. կնքված
ՎՁՄ ՇՄԴ ԳՀԾՁԲ19/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների/ աճողական/ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 60130000 | աշակերտների և դասավանդող ուսուցիչների ուղևորափոխադրման ծառայություններ | 0 | 147,5 | 147,5 | 304,7 | 460,6 | 460,6 | 573,5 | 573,5 | 752,7 | 922,9 | 1111,1 | 1245,5 | **1245,5** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՏԱՐՈՂ**

Շատինի միջն. Դպրոց ՊՈԱԿ.
ՀՀ Վայոց ձորի մարզ գ. Շատին
ՀՀ ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900358000116
ՀՎՀՀ 08903519
Տնօրեն՝ Բ. Մարգարյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

«Հայկ Մարտիրոսյան Վարազդատի»Ա/Ձ
ՎՁ Վարդահովիտ 8փ շ6 բն. 8
ՀՎՀՀ 86685948
Բանկ՝ ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16016023279100
Տնօրեն՝ Հ. Մարտիրոսյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ